# ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ

9 Փետրուար, Ուրբաթ, առաւօտեան ժամը 10ին, Միաբանական Ընդհանուր Ժողով գումարուեցաւ Պատրիարքական Տեղապահի ընտրութեան համար: Գաղտնի քուէարկութեամբ (37 ներկաներէն 21 ձայնով) ընտրուեցաւ Ամերիկահայոց բազմամեայ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանը: 13 ձայն ստացաւ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեանը: Մէկական ձայն ստացան Գերշ. Տ. Գիւտ Արք. Նազգաշեանը եւ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանը: Ձեռնպահ քուէ ալ կար:

Ընտրեալը զգածուած խօսքերով շնորհակալութիւն յայտնեց Միաբանութեան: Անդրադարձաւ կորուստին մեծութեանը, զոր Ս. Յակոբեանց Ուխտը ունեցաւ մահուամբը Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարքին, հայցեց Ամենակալին պաշտպանութիւնը Հաստատութեան վրայ, որպէսզի բոլորս մէկ շարունակենք աշխատիլ լեցնելու իրմով բացուած պարապը եւ անսասան պահելու այս Աթոռին դարաւոր դերը: Խնդրեց Միաբանութեան օժանդակութիւնը այս պատասխանատու եւ բազմերես պաշտօնավարութեան մէջ, շարունակել կարենալու համար իր մահով ընդմիջուած գործը: Միաբանութիւնը աջահամբոյրով իր շնորհաւորութիւնը յայտնեց Տեղապահ Ս. Հօր:

— Նոյն օրը պաշտօնագրով մը հաղորդուեցաւ ընտրութիւնը Վսեմ. Կրօնից Նախարարին: Հետեւեալն է այդ պաշտօնագիրը որուն կը կցենք նաեւ ճանաչման Գիրը, երկու օրեր ետք Վսեմ. Նախարարէն ստացուած:

Jerusalem, 9th February 1990

His Excellency
Mr. Zevulun Hammer
Minister of Religious Affairs
Jerusalem

Your Excellency

We respectfully inform you that a General Assembly of the Brotherhood of St. James of the Armenian Patriarchate of Jerusalem was convened today, Fiiday, February Ninth, 1990, at 10 a. m., wherein His Eminence Archbishop Torkom Manoogian was elected Locum Tenens by a majority vote of the Brotherhood in accordance with Article 24,

> "When the Patriarchal Throne of Jerusalem is left vacant for any cause, the Patriarchal Vicar, in consultation with the Administrative Council shall hasten to convene the General Assembly of the Brotherhood and shall cause same to elect", and sub-section B "The Patriarchal Locum Tenens, who shall be elected by a majority vote and with single name on the ballot ...".

of the Constitution and by laws of the Saint James Brotherhood.

By virtue of these provisions, His Eminence Archbishop Manoogian is vested with the authority and powers implied therein and our rights and privileges ab antiquo.

Respectfully yours,

BISHOP GUREGH KAPIKIAN
Patriarchal Vicar
President of the General Assembly

Fr. PARSEGH KALEMDERIAN
Secretary
of the General Assembly

BISHOP SEVAN GHARIBIAN
Chairman
of the General Assembly

digitised by A.R.A.R.@

16 Shevat 5750, 11 February 1990

His Excellency
Patriarchal Vicar
Bishop Guregh Kapikian
President of the General Assembly

Your Excellency,

I do hereby confirm receipt of your letter of 9th February 1990 concerning the election of His Eminence Archbishop Torkom Manoogian Locum Tenens.

My congratulation to him for the election, and my best wishes to the Armenian community.

Respectfully Yours,
ZEVULUN HAMMER

---

## ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԹԱՂՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Ամերիկայէն՝

*Թորգոմ Արքեպս. Մանուկեան (Նիւ Եորք), Վարուժան Ծ. Վրդ. Գասպարաճեան (Ճիքակօ), Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեան (Լիվինկսթըն), Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան (Ռօչէսթըր), Ղեւոնդ Ծ. Վրդ. Սամուրեան (Զէյմսֆօրտ), Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան (Փրօվիտէնս), Նուրհան Վրդ. Մանուկեան (Սփրինկֆիլտ), Խաժակ Վրդ. Պարսամեան (Նիւ Եորք), Մուշեղ Վրդ. Թաշճեան (Փասատէնա), Հայկազուն Վրդ. Մելքոնեան (Փէնսիլվէնիա), Եղնիկ Վրդ. Պալեան (Նիւ Եորք) և Բարգէն Վրդ. Անուշեան (Նիւ Եորք)։*

Ֆրանսայէն

*Գիւտ Արքեպս. Նագգաշեան (Փարիզ), Ներսէս Ծ. Վրդ. Բապուճեան (Ալֆօրվիլ), Ժիրայր Վրդ. Թաշճեան (Փարիզ) և Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան (Մարսէյլ)։*

Արժենթինէն

*Գիսակ Վրդ. Մուրադեան (Պ. Այրէս)։*

Զուիցերիայէն

*Վիգէն Վրդ. Այգազեան (Ժընև)։*

Աւստրալիայէն

*Աղան Եպս. Պալիօզեան (Սիտնի)։*

Պրազիլէն

*Տաթև Եպս. Ղարիպեան (Ս. Փաւլօ)։*

Յորդանանէն

*Վահան Եպս. Թօփալեան (Ամման)։*

*Իսկ Հմայեակ Եպս. Ինգոյեան (Մայամիէն), որ հոս կը գտնուէր Ծննդեան տօնին առիթով և որ պիտի մեկնէր Պատրիարքի մահուան վաղորդայնին, յետաձգեց իր մեկնումը, բերելու համար իր մասնակցութիւնը Լուսահոգիի թաղումին։*

*Բացի Միաբանութեան անդամներէն, մեր մէջ ունեցանք Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ Ներսէս Արքեպս. Պօզապալեանը (Ս. Էջմիածնէն) և Մ. Տ. Կիլիկիոյ Հայրապետի ներկայացուցիչ Սահակ Արքեպս. Այվազեանը (Աթէնքէն), իսկ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան կողմէ ներկայ էր Մեսրոպ Եպս. Մութաֆեան։ Իսկ Մայր Հայրենիքէն մեր մէջ ունէինք Նոր-Վիրապի վանահայր Գուրգէն Ա. Քհնյ. Մուրադեանը, որ Հմայեակ Եպս.ի նման ժամանած էր Ս. Ծննդեան առիթով և յետաձգեց իր մեկնումը։*

*Վերոյիշեալ Միաբան Սրբազաններն ու Հայրերը, բացի Եղնիկ Վրդ.էն, 8-20 Մարտի ընթացքին վերստին ժամանեցին Երուսաղէմ, մասնակցելու համար Պատրիարքական ընտրութեան։ Այս անգամ ժամանեցին նաև Յակոբ Եպս. Վարդանեանը՝ Մարսէյլէն և Վազգէն Վրդ. Գարայեանը՝ Նիւ Եորքէն։*

*Իսկ Թորգոմ Արքեպս., ընտրուած ըլլալով Տեղապահ, արդէն մնացած էր Երուսաղէմ։*

digitised by A.R.A.R.@